



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

26 հունիսի 2019 թվականի թիվ 72 -Ա  
ք. Երևան

### ՄԱՍՆԱՎՈՐ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 55.2-րդ հոդվածի և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 13-ի «Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 29-Ն որոշման դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. 2019 թվականի հունիսի 27-ին հայտարարել մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթ.
2. Հաստատել և հրապարակել զանգվածային լրատվության միջոցներով մրցույթի մասին տեղեկատվությունը՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2019թ. հունիսի 26  
ք. Երևան

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ մասնավոր մուլտիպլեքսորի գործունեություն:

2. Մրցույթի մասնակցին ներկայացվող պարտադիր պահանջները՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 55.1-րդ հոդվածի համաձայն մասնավոր մուլտիպլեքսորի գործունեությունը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված իրավաբանական անձի կողմից, որի հիմնադրման (ստեղծման) ժամանակ կամ դրանից հետո օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է հավասար կամ ավելի լինի հեռարձակող կազմակերպության որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի 50 տոկոսից:

3. Անհրաժեշտ փաստաթղթեր՝

- 1) ապացույցներ հեռարձակման թվային ցանցը ստեղծելու և շահագործելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների վերաբերյալ,
- 2) ֆինանսական կարողությունները հիմնավորող փաստաթղթեր,
- 3) հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագիծը, ներառյալ ցանցի գործարկման ժամանակացույցը:

4. Դիմումներն ընդունվում են 2019 թվականի հունիսի 27-ից մինչև դեկտեմբերի 27-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ն: Դիմումները և կից փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Բսահակյան 28 հասցեով:

5. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել (010) 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել [licensing@tvradio.am](mailto:licensing@tvradio.am) էլ. փոստի հասցեով:

6. Դիմումի ձևը՝

\_\_\_\_\_ ին  
(անուն, ազգանուն)

**ԴԻՄՈՒՄ**

**Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզիա ստանալու**

Դիմումատուի անվանումը \_\_\_\_\_

Գտնվելու վայրը \_\_\_\_\_

Գործունեության իրականացման վայրը \_\_\_\_\_

Հեռախոսահամարը, էլ. հասցեն \_\_\_\_\_

Պետական գրանցման համարը \_\_\_\_\_

Հարկ վճարողի հաշվառման համարը \_\_\_\_\_

Տեղեկություններ մուլտիպլեքսի կառուցման և գործարկման  
համար անհրաժեշտ ռադիոհաճախականությունների մասին \_\_\_\_\_

**Կից փաստաթղթեր.**

- ապացույցներ հեռարձակման թվային ցանցը ստեղծելու և շահագործելու  
համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների վերաբերյալ \_\_\_\_\_ թերթ,
- ֆինանսական կարողությունները հիմնավորող փաստաթղթեր \_\_\_\_\_ թերթ,
- հեռարձակման թվային ցանցի ստեղծման նախագիծը,  
ներառյալ ցանցի գործարկման ժամանակացույցը \_\_\_\_\_ թերթ:

Ընդամենը՝ \_\_\_\_\_ թերթ:

Տնօրեն \_\_\_\_\_  
(անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (օրը, ամիսը, տարեթիվը)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)